«ՀՀ հաշվեքննիչ պալատ» պետական մարմին

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Երևան
Դեկտեմբեր 2020թ.

«ՀՀ հաշվեքննիչ պալատ» պետական մարմին
Ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորի եզրակացություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Բովանդակություն

3	Անկախ աուդիտորի եզրակացություն
5	Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
6	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
7	Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
8	Զուտ ակտիվում փոփոխությունների մասին հաշվետվություն
9	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
10	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Հեռ. +37460 528899
էլ.փոստ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Մեսրոպի 23/6, 5-րդ հարկ, տարածք 7

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ներկայացվում է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմին և «ՀՀ հաշվեքննիչ պալատ» պետական մարմնին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՀՀ հաշվեքննիչ պալատ» պետական մարմնի (այսուհետ՝ ՀՊ ՊՄ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի, դրամական միջոցների հոսքերի մասին և զուտ ակտիվում փոփոխությունների հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով պատրաստված են համաձայն ՀՀ Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի (ՀՀՀՀՍ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն հաշվետվության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:*

Մենք անկախ ենք ՀՊ ՊՄ-ից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում – հետագա դեպքեր

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում այս ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 13-ին, որը նկարագրում է հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքերը:

Այլ հանգամանք- աուդիտի շրջանակ

ՀՊ ՊՄ-ի 31 դեկտեմբերի 2018թ.-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որը 2019թ. նոյեմբերի 29-ին արտահայտվել է չձևափոխված կարծիք:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

ՀՊ ՊՄ-ի ղեկավարությունը պատասխանատու է ՀՀՀՀՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Կառավարման լիազոր անձիք պատասխանատու են ՀՊ ՊՄ-ի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ-ն հանդիսանում է բրիտանական Բի-Դի-Օ Ինթերնեշնլ Լիմիթեդ ընկերության անդամ և Բի-Դի-Օ անկախ ընկերությունների միջազգային ցանցի անդամ:

Հեռ. +37460 528859
էլ. փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Գ. Մնացականյանի 23/6, 5-րդ հարկ, տարածք 7

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի հաշվետվություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խարդախության կամ սխալի արդյունքում առաջացող խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- նույնականացնում և գնահատում ենք՝ սխալի կամ խարդախության արդյունքում ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքը հիմնավորելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտմաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե ՀՊ ՊՄ-ի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների ու գործարքների ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի հարցերի մասին:

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

Գնել Խաչատրյան, FCCA
Աուդիտի ղեկավար

"ԲԴՕ ԱՐՄԵՆԻԱ"
"BDO ARMENIA"
01569792

"Բի-Դի-Օ Արմենիա" ՓԲԸ

1 դեկտեմբերի 2020թ.

«ՀՀ հաշվեքննիչ պալատ» պետական մարմին
Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծան.	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
«Բյուջեի ֆինանսավորմամբ» ստացված հասույթ	4	1,122,226	1,101,915
Աշխատակիցների հատուցումներ		(961,735)	(969,353)
Գործուղման ծախսեր		(61,095)	(43,001)
Վարձակալության ծախսեր	5	(33,086)	(35,002)
Մաշվածություն և ամորտիզացիա		(26,417)	(26,358)
Այլ գործառնական ծախսեր	6	(47,122)	(36,786)
Այլ եկամուտներ		922	288
Տարվա պակասուրդ		**(6,307)**	**(8,297)**

Ֆինանսական հաշվետվությունները (էջ 5-16) հաստատվել են «ՀՀ հաշվեքննիչ պալատ» պետական մարմնի կողմից 2020թ. դեկտեմբերի 1-ին, ստորագրությամբ՝

Հայկ Ավագյան
Գլխավոր քարտուղար

Նինա Սահակյան
Ֆինանսատնտեսական և հաշվապահական հաշվառման վարչության պետ

«ՀՀ հաշվեքննիչ պալատ» պետական մարմին
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծան.	31 դեկ. 2019թ. հազ. դրամ	31 դեկ. 2018թ. հազ. Դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	8	88,488	104,248
Ոչ նյութական ակտիվներ		2,794	3,112
		91,282	**107,360**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	7	11,445	12,774
Դեբիտորական պարտքեր		1,053	1,131
		12,498	**13,905**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**103,780**	**121,265**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ընթացիկ պարտավորություններ			
Պայմանով ստացված ակտիվների գծով ոչ ընթացիկ հետաձգված հասույթ	9	26,417	26,358
Պահուստ և կրեդիտորական պարտքեր	10	42,029	37,127
		68,446	**63,485**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Պայմանով ստացված ակտիվների գծով ընթացիկ հետաձգված հասույթ	9	64,864	81,003
		64,864	**81,003**
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**133,310**	**144,488**
ԸՆԴԱՄԵՆԸ ԶՈՒՏ ԱԿՏԻՎ		**(29,530)**	**(23,223)**

«ՀՀ հաշվեքննիչ պալատ» պետական մարմին
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
«Բյուջեի ֆինանսավորմամբ» ծառայությունների մատուցումից	1,096,694	1,075,848
Ընդամենը գործառնական գործունեությունից ներհոսքեր	**1,096,694**	**1,084,485**
Աշխատակիցներին և նրանց անունից դրամական վճարումներ	(956,368)	(949,534)
Ծառայությունների ձեռքբերման դիմաց վճարումներ	(61,819)	(48,112)
Նյութերի և այլ պաշարների ձեռքբերման դիմաց վճարումներ	(15,620)	(19,318)
Գործուղումների հետ կապված վճարումներ	(61,207)	(44,362)
Հարկերի և այլ պարտադիր վճարների հետ կապված վճարումներ	(1,680)	(15,043)
Գործառնական գործունեությունից այլ արտահոսքեր	-	(940)
Ընդամենը գործառնական գործունեությունից արտահոսքեր	**(1,096,694)**	**(1,084,485)**
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսք	**-**	**-**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման համար բյուջեից պայմանով ստացված գումարների գծով ներհոսքեր	10,338	20,035
Հիմնական միջոցների ձեռքբերման հետ կապված արտահոսքեր	(10,338)	(16,843)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերման հետ կապված արտահոսքեր	-	(3,192)
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսք	**-**	-
Դրամական միջոցների զուտ աճ	**-**	-
Դրամական միջոցներ տարեսկզբի դրությամբ	**-**	-
Դրամական միջոցներ տարեվերջի դրությամբ	**-**	-

«ՀՀ հաշվեքննիչ պալատ» պետական մարմին
Զուտ ակտիվում փոփոխությունների մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Կուտակված պակասուրդ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Մնացորդն առ 1 հունվար 2019	(23,223)	(23,223)
Տարվա արդյունք	(6,307)	(6,307)
Մնացորդն առ 31 դեկտեմբեր 2019	**(29,530)**	**(29,530)**
Մնացորդն առ 1 հունվար 2018	(14,926)	(14,926)
Տարվա արդյունք	(8,297)	(8,297)
Մնացորդն առ 31 դեկտեմբեր 2018	**(23,223)**	**(23,223)**

«ՀՀ հաշվեքննիչ պալատ» պետական մարմին
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1. ՀՀ հաշվեքննիչ պալատի մասին 10
2. Պատրաստման հիմունքներ 10
3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ 11
4. «Բյուջեի ֆինանսավորմամբ» ստացված հասույթ 11
5. Վարձակալության ծախսեր 11
6. Այլ գործառնական ծախսեր 11
7. Պաշարներ 12
8. Հիմնական միջոցներ 12
9. Պայմանով ստացված ակտիվների գծով հետաձգված հասույթ 13
10. Պահուստ և կրեդիտորական պարտքեր 13
11. Գործարքներ ղեկավարության հետ 14
12. Պայմանական պարտավորություններ 14
13. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքեր 14
14. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն 15

1. ՀՀ հաշվեքննիչ պալատի մասին

ՀՀ Հաշվեքննիչ պալատը (ՀՊ ՊՄ) արտաքին պետական հաշվեքննություն (աուդիտ) իրականացնող անկախ պետական մարմին է: ՀՊ ՊՄ-ի գործունության նպատակը հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում պետական և համայնքային բյուջեների միջոցների, ստացված փոխառությունների և վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության վերաբերյալ Ազգային Ժողովին և հանրությանը ժամանակին, մասնագիտական և անկողմնակալ տեղեկատվության ներկայացումն է:

2018թ. հունվարի 16-ին ընդունվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է մտել 2018թ. ապրիլի 9-ից: Օրենքի 46 հոդվածի համաձայն ՀՊ ՊՄ-ն հանդիսանում է ՀՀ Վերահսկիչ պալատի իրավահաջորդը:

ՀՊ ՊՄ-ի հիմնական գործառույթներն են.

- Կազմակերպել և իրականացնել պետական բյուջեի և համայնքային միջոցների նկատմամբ հաշվեքննություն,
- Օրենքով նախատեսված դեպքերում իրականացնել ստուգումներ,
- Իրականացնել «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթներ:

ՀՊ ՊՄ-ը կազմված է յոթ անդամներից՝ հաշվեքննիչ պալատի նախագահից և վեց անդամից: ՀՊ ՊՄ-ի գտնվելու վայրն է ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 19: Աշխատակիցների միջին թվաքանակը 2019թ.-ին կազմել է 146 մարդ (2018թ.-ին՝ 149 մարդ)

2. Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀ Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտին (ՀՀՀՀՍ) համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 13-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև ՀՊ ՊՄ-ի գործառնական արժույթը: Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

ՀՀՀՀՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

Անընդհատության սկզբունք

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիման վրա:

3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ՀՊ ՊՄ-ն պետք է կատարի որոշակի հաշվապահական գնահատումներ և դատողություններ, որոնք ազդում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված քաղաքականության և գումարների վրա: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի, ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների և այլ գործոնների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից:

- Հիմնական միջոցների մնացորդային նորմատիվային օգտակար ծառայության ժամկետներ – ծանոթագրություն 14,
- Վարձակալության դասակարգումը գործառնական կամ ֆինանսական՝ կապված ակտիվի սեփականության հետ կապված էական ռիսկերի և օգուտների – ծանոթագրություն 5:

4. «Բյուջեի ֆինանսավորմամբ» ստացված հասույթ

	2019թ. հազ.դրամ	2018թ. հազ.դրամ
«Բյուջեի ֆինանսավորմամբ» ծրագրերի իրականացումից հասույթ	1,096,694	1,075,845
Պայմանով ստացված ակտիվների գծով հասույթ (ծնթ. 9)	25,532	26,070
	1,122,226	**1,101,915**

5. Վարձակալության ծախսեր

Վարձակալության ծախսերը վերաբերել են ք. Երևանում գրասենյակային տարածքի վարձակալությանը: Վարձակալությունը կնքված է անորոշ ժամկետով և կարող է վաղաժամկետ չեղարկվել: Վարձակալությունը դասակարգվել է որպես գործառնական վարձակալություն:

ՀՊ ՊՄ-ն անհատույց ու անորոշ ժամկետով զբաղեցնում է ՀՀ Ազգային Ժողովի տարածքում գտնվող մեկ մասնաշենք:

6. Այլ գործառնական ծախսեր

	2019թ. հազ.դրամ	2018թ. հազ.դրամ
Նյութական ծախսեր	16,949	20,161
Հիմնական միջոցների նորոգման և սպասարկման ծախսեր	14,702	4,930
Հեռահաղորդակցության ծախսեր	5,189	5,327
Համակարգչային ծառայություններ	4,365	1,555
Գրասենյակային պարագաներ	2,757	923
Կոմունալ ծախսեր	2,000	1,810
Այլ ծախսեր	1,160	2,080
	47,122	**36,786**

7. Պաշարներ

	31.12.2019 հազ. դրամ	31.12.2018 հազ. դրամ
Կենցաղային և գրասենյակային նյութեր	10,867	10,758
Պահեստամասեր և վառելիք	578	2,016
	11,445	**12,774**

8. Հիմնական միջոցներ

	Ավտոմե-քենաներ հազ. դրամ	Համակարգչային և այլ սարքավորումներ հազ. դրամ	Գրասենա-յակային գույք Հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Սկզբնական արժեք				
1 հունվարի 2018թ.	46,836	88,921	3,392	139,149
Ավելացումներ	16,657	14,033	5,197	35,887
Դուրսգրումներ	(653)	-	-	(653)
31 դեկտեմբերի 2018թ.	**62,840**	**102,954**	**8,589**	**174,383**
1 հունվարի 2019թ.	62,840	102,954	8,589	174,383
Ավելացումներ	-	10,338	-	10,338
Դուրսգրումներ	(279)	-	-	(279)
31 դեկտեմբերի 2019թ.	**62,561**	**113,292**	**8,589**	**184,442**
Կուտակված մաշվածություն				
1 հունվարի 2018թ.	(5,324)	(37,174)	(2,011)	(44,509)
Տարվա մաշվածություն	(7,690)	(17,480)	(1,109)	(26,279)
Դուրսգրումներ	653	-	-	653
31 դեկտեմբերի 2018թ.	**(12,361)**	**(54,654)**	**(3,120)**	**(70,135)**
1 հունվարի 2019թ.	(12,361)	(54,654)	(3,120)	(70,135)
Տարվա մաշվածություն	(8,620)	(16,714)	(764)	(26,098)
Դուրսգրումներ	279			279
31 դեկտեմբերի 2019թ.	**(20,702)**	**(71,368)**	**(3,884)**	**(95,954)**
Ընթացիկ արժեք				
1 հունվարի 2018թ.	41,512	51,747	1,381	94,640
31 դեկտեմբերի 2018թ.	50,479	48,300	5,469	104,248
31 դեկտեմբերի 2019թ.	**41,859**	**41,924**	**4,705**	**88,488**

Հիմնական միջոցները գրավադրված չեն։

Դեռևս օգտագործման մեջ գտնվող, բայց լրիվ մաշված հիմնական միջոցներ

	31.12.19	31.12.18
	հազ. դրամ	հազ. դրամ
Համակարգչային և այլ սարքավորումներ	29,934	28,814
Տրանսպորտային միջոցներ	4,255	427
Գրասենյակային գույք և այլ հիմնական միջոցներ	2,672	2,352
Ընդամենը	**36,861**	**31,593**

9. Պայմանով ստացված ակտիվների գծով հետաձգված հասույթ

	31.12.19	31.12.18
	հազ. դրամ	հազ. դրամ
Մեքենաների և սարքավորումների ձեռքբերման գծով	80,452	94,840
Ոչ նյութական ակտիվերի ձեռքբերման գծով	2,793	3,112
Այլ հիմնական միջոցների ձեռքբերման գծով	4,276	4,763
Այլ կազմակերպություններից ստացված մեքենաների և սարքավորումների գծով	3,133	3,941
Այլ կազմակերպություններից ստացված այլ հիմնական միջոցների գծով	627	705
	91,281	**107,361**

Պայմանով ստացված ակտիվների գծով հետաձգված հասույթի շարժը տարվա ընթացքում.

	2019թ.	2018թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	107,361	113,684
Պայմանով ստացված ակտիվների ձեռքբերման գծով	10,338	20,035
Եկամտի ճանաչում բյուջեի միջոցներից պայմանով ստացված ակտիվների մասով	(25,532)	(26,070)
Եկամտի ճանաչում այլ կազմակերպություններից պայմանով ստացված ակտիվների մասով	(885)	(288)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**91,281**	**107,361**

10. Պահուստ և կրեդիտորական պարտքեր

	31.12.2019	31.12.2018
	հազ.դրամ	հազ.դրամ
Չօգտագործված արձակուրդի գծով պահուստ	39,625	34,602
Առևտրային կրեդիտորական պարտքեր	2,404	2,424
Հաշվեգրված հատուցումներ աշխատակիցներին	-	101
	42,029	**37,127**

11. Գործարքներ ղեկավարության հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը, որը կազմված է խորհրդի յոթ անդամներից, ստացել է հետևյալ վարձատրությունը, ներառված «Աշխատակիցների հատուցումներ» հոդվածում:

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Աշխատավարձ	69,264	72,243
Պարգևատրումներ	32,125	33,750
	101,389	**105,993**

12. Պայմանական պարտավորություններ

Հաշվետու ամսաթվի դրությամբ, ՀՊ ՊՄ-ը ընդգրկված չէ որևիցե դատական գործերի մեջ, որոնք կարող են էականորեն ազդել ՀՊ ՊՄ-ի ֆինանսական հաշվետվությունների վրա:

13. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքեր

Կորոնավիրուսի համավարակ («COVID-19 բռնկում»)

2020 թվականի հունվարի 30-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը («ԱՀԿ») հայտարարեց առողջապահական գլոբալ արտակարգ իրավիճակ Չինաստանի Վուհան քաղաքում ծագած կորոնավիրուսի նոր շտամի պատճառով («COVID-19 բռնկում»), ինչպես նաև նշեց միջազգային հանրության համար առկա ռիսկի մասին, քանի որ վիրուսը տարածվում է ողջ աշխարհում իր ծագման վայրից դուրս: 2020 թվականի մարտին ԱՀԿ-ն COVID-19-ի բռնկումը որակեց որպես պանդեմիա ՝ հիմնվելով դրա համաշխարհային ազդեցության արագ աճի վրա:

Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված՝ ՀՀ ամբողջ տարածում 2020թ. մարտի 16-ից հաստատվել է արտակարգ դրության ռեժիմ, իսկ 2020թ. սեպտեմբերի 12-ից՝ կարանտին: Այն նշանակալի սահմանափակումներ է առաջացրել հաշվեքնության ենթակա կազմակերպություններ այցելությունների, իրականացվող ընթացակարգերի և հաշվեքնության համար անհրաժեշտ այլ միջոցառումների իրականացման նպատակով:

Ռազմական դրություն

2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերը լայնամասշտաբ հարձակում էին սկսել Արցախի Հանրապետության պաշտպանության դիրքերի ուղղությամբ և ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակում ՀՀ կառավարությունը, հանդիսանալով Արցախի Հանրապետության անվտանգության երաշխավոր, հայտարարել է ռազմական դրություն և ընդհանուր զորահավաք: Ռազմական գործողությունների ինտենսիվությունը և տևողությունը էական բացասական ազդեցություն են ունեցել երկրի տնտեսական ակտիվության և եկամուտների մակարդակի վրա:

Հաշվեքննության իրականացումն անհնարին դարձնող անկանխատեսելի հանգամանքով պայմանավորված, ՀՊ ՊՄ-ն 30.09.2020թ.-ին ժամանակավորապես կասեցրել էր իրականացվող հաշվեքննությունները և ստուգումները:

Նոյեմբերի 9-ին Ադրբեջանի, Հայաստանի և Ռուսաստանի միջև ստորագրված հայտարարությունը, որով նոյեմբերի 10-ից հաստատվել է հրադադար և ռազմական բոլոր գործողությունների դադարեցում, որից հետո երկրի ներսում առաջացել է քաղաքական դաշտի անկայունություն:

14. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները նյութական ակտիվներ են,

1) որոնք առկա են ծառայությունների մատուցման կամ վարչական նպատակով,
2) որոնք ակնկալվում է օգտագործել ավելի քան մեկ տարվա ընթացքում,
3) որոնց արժեքը սկզբնական ճանաչման պահին գերազանցում է լիազոր մարմնի (ՀՀ Ֆինանսների նախարարության) կողմից սահմանված չափը (25 հազար դրամ), բացառությամբ համակարգչային տեխնիկայի, գրասենյակային կահույքի և հեռախոսների:

Փոքրարժեք կամ արագամաշ առարկաները նյութական ակտիվներ են, որոնք չեն բավարարում հիմնական միջոցների սահմանման երկրորդ կամ երրորդ կետերի պահանջներին և ընդգրկված են պաշարների կազմում:

Հիմնական միջոցի միավորը որպես ակտիվ ճանաչվելուց հետո չափվում է սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը, բացառությամբ հողամասերի և շենքերի:

Հաշվետու ամսաթվի դրությամբ, ՀՊ ՊՄ-ը չունի հողամասեր կամ շենքեր:

Հիմնական միջոցի միավորը մաշեցվում է իր օգտակար ծառայության ընթացքում: Հիմնական միջոցի միավորի մաշվող գումարը պարբերաբար բաշխվում է ակտիվի օգտակար ծառայության ընթացքում՝ գծային մեթոդով:

Օգտակար ծառայությունը՝

ա) նոր հիմնական միջոցի համար՝ դրա նորմատիվային օգտակար ծառայությունն է, որը սահմանել է լիազոր մարմինը՝ նոր հիմնական միջոցների մաշվածությունը հաշվարկելու համար: ՀՀ Ֆինանսների նախարարի 2015թ. հունվարի 8-ի թիվ 3-Ն հրամանով սահմանված են հետևյալ նորմատիվային օգտակար ծառայության ժամկետները.

- Տրանսպորտային միջոցներ 10 տարի
- Կահույք 10 տարի
- Համակարգիչներ 5 տարի
- Համակարգչային տեխնիկաները 7 տարի
- Գրասենյակային այլ գույք և սարքավորումներ 8 տարի

բ) նախկինում օգտագործված (հին) հիմնական միջոցի համար՝ մնացորդային նորմատիվային օգտակար ծառայությունն է, որը նորմատիվային օգտակար ծառայության այն մասն է, որի ընթացքում ակնկալվում է որ այդ հիմնական միջոցը կօգտագործվի:

Հիմնական միջոցի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն՝ երբ այն գտնվում է այն վայրում և այնպիսի վիճակում, որն անհրաժեշտ է հիմնական միջոցը նախանշած նպատակով օգտագործելու համար:

Պաշարներ

Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների արժեքը որոշվում է դրանց կոնկրետ ծախսումների հստակ առանձնացման միջոցով:

Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների արժեքը որոշվում է «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» (ՖԻՖՈ) բանաձևով:

«Բյուջեի ֆինանսավորմամբ» հասույթ

ՀՊ ՊՄ տարեկան ֆինանսավորումը իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցով, որպես պետական բյուջեի ծախսերի բաղկացուցիչ մաս: Տարեկան հատկացվող գումարի չափը հաստատվում է տվյալ տարվա համար պետական բյուջեով ՀՊ ՊՄ-ի համար սահմանված գումարի չափով:

«Բյուջեի ֆիանսավորմամբ» հասույթը ճանաչվում է տվյալ տարվա ընթացքում բյուջեով ֆինանսավորման ենթակա կատարված ծախսերի չափով:

Համաձայն ՀՀ բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների, դրամարկղերում և գանձապետական հաշիվներում ՀՀ պետական բյուջեի միջոցների առկա մնացորդները տարեվերջով փոխանցվում են ՀՀ պետական բյուջե՝ որպես բյուջետային տարում չօգտագործված միջոցներ:

Պայմանով ստացված ակտիվներ և նրանց գծով հասույթ

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռք բերման համար ստացված դրամական միջոցները, ինչպես նաև ՀՊ ՊՄ-ին անմիջականորեն փոխանցված հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները հանդիսանում են պայմանով փոխանցված ակտիվներ: Նշված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների գծով պայմանն այն է, որ դրանք պետք է օգտագործվեն համապատասխանաբար որպես հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ՝ ՀՊ ՊՆ-ի գործունեության նպատակների համար:

Պայմանով ստացված ակտիվների գծով հասույթը ճանաչվում է այդ ակտիվների մաշվածությանը (ամորտիզացիային) համապատասխան:

Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների հատուցումները աշխատակիցների կողմից մատուցված ծառայության դիմաց ցանկացած ձևով տրվող հատուցումներն են: Աշխատակիցների հատուցումները ներառում են՝

- աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները, մասնավորապես՝ աշխատավարձը, արձակուրդային գումարները,
- ազատման նպաստները:

Վարձակալություն

Վարձակալությունը համաձայնագիր է, որով վարձատուն վճարի կամ վճարների շարքի դիմաց համաձայնեցված ժամկետի ընթացքում վարձակալին է փոխանցում ակտիվի օգտագործման իրավունքը:

Վարձակալությանը դասակարգրվում է երկու տեսակի՝ գործառնական կամ ֆինանսական:
Ֆինանսական վարձակալություն. երբ վարձակալին է փոխանցում ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Սեփականության իրավունքը կարող է ի վերջո փոխանցվել կամ չփոխանցվել:
Գործառնական վարձակալություն. երբ սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները չեն փոխանցվում վարձակալին:
Վարձակալության դասակարգումը ֆինանսականի կամ գործառնականի կատարվում է վարձակալության սկզբի դրությամբ:

Գործառնական վարձակալության գծով վարձավճարները ճանաչվում են որպես ծախս գծային հիմունքով: